

ԶՐՈՅՑ՝ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՉՆԵՐԷՆ ՄԿՐՏԻՉ ՊՈՒՆՏՈՒՔԵԱՆԻ ՀԵՏ

Posted on December 12, 2009 by keghart.com

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Եւ այսպէս ահա տարի մըն ալ անցաւ:
 Կարօտն անցեալին՝ նստած մեր սրտին,
 Ցամաքէ ցամաք, մեծ ոստիւններով
 Ափ ափի բերինք:
 Քաղաքէ՝ քաղաք, ուր որ ալ եղանք,
 Մէկ թարթի մը մէջ իրար միացանք,
 Վանեցիներ յաւետ ըմբռնումն հեռուին,
 Ու երեկուան պէս թա՛րմ ի՛նչ քաղցր յուշեր,
 Վէտ վէտ քակուեցան կծիկի նման,
 Բլուրի նման դարձեալ դիզուեցան
 Ու քանդակեցին լուսափայլ քուրմեր
 Անդէմ, անկործան:
 Եւ դարձեալ այսպէս պատմեցինք համակ
 Աշխարհը յուզող դէպքերը բոլոր,
 Խառնեցինք իրար հին ու նոր խօսքեր,
 Փորձեցինք յաճախ յոռետես մտքով
 Մերձենալ ի սպառ լուսատեսութեան:
 Մտնալ ուզեցինք անցեալը թախծոտ,
 Յուսալով կրկին բացուեցանք նորին,
 Ու նորը եկաւ նման անցեալին
 Տարաւ մեզ կրկին հին հանգրուանին,
 Ու դեռ այս անգամ մնացինք կառչած,
 Վերջին պահերուն առկայծող տարուան
 Կարօտը կերտող յիշատակներուն,
 Քար քանդակներու մեռած անցեալին:
 Պիտ յուսանք սակայն եւ յամաբօրէն
 Նոր տարուայ սեմին զինուած անցեալով,
 Բաժնել բոլորին, հեռուին ու մօտին,
 Անցեալէն հասնող երազ թիւթական,
 Մաղթանքներ առատ՝ բարութիւն վաղուան:
 Թող գալիք տարին ըլլայ իսկական
 Բեղուն նոր տարի, շալկած ուսերուն

Category: [Opinions](#)





